«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՎՀՀ՝ 02591995
Հեռ./ֆաքս՝ /010/ 524 724

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ.Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԱՈՒԴԻՏԻ

Տեղ համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 209-Ա որոշմամբ հաստատված Տեղ համայնքի ներքին աուդիտի տարեկան ծրագրի համաձայն իրականացվել է Տեղի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետավորման գործընթացի, ծախսերի ըստ բյուջետային գործառնական և տնտեսագիտական դասակարգման կատարման կատարողական աուդիտ, որի շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել է կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի հաշվետվությունները:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի մասին 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական պատկերը՝ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

24 փետրվարի 2022թ.

«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
տնօրեն՝ Ա. Բաբայան

02591995
"ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ"
"ПЕРФЕКТ АУДИТ"
"PERFECT AUDIT"

Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կատարողական աուդիտ

Տեղ համայնքի 2021թ.-ի բյուջեի ամփոփ աղյուսակ եկամուտների գծով

/հազ.դրամ/

Հոդվածների անվանումը	Եկամուտների պլան	Ճշտված պլան	Փաստացի մաս	Շեղում գումարով		
				+	-	%
1. Հարկային եկամուտ	**45679.1**	**45679.1**	**50755.6**	**6915.5**	**1839.0**	**111.1%**
ա) անշարժ գույքի հարկ	25273.1	25273.1	32022.7	6749.6		126.7%
բ) գույքային հարկեր այլ գույքից	19652.4	19652.4	17813.4		1839	90.6%
գ) տուրքեր	753.6	753.6	919.5	165.9		122.0%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	**162325.5**	**186281.4**	**168124.9**	**0.0**	**18156.5**	**90.3%**
ա) դոտացիա	16232	162326	162326	0	0	100.0%
բ) սուբվենցիա		1056	1056	0	0	100.0%
Գ) Այլ դոտացիա		22899.9	4743.4		18156.5	20.7%
3.Այլ եկամուտներ	**19565.7**	**43473.9**	**35438.8**	**400.0**	**8435.1**	**81.5%**
ա) գույքի վարձակալությունից եկամուտներ	7782.1	7782.1	3530.5		4251.6	45.4%
բ) վարչական գանձումներից	8283.6	8283.6	6885		1398.6	83.1%
գ) համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	3500	3500	2252.7		1247.3	64.4%
դ) Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ		1000	1000	0	0	100.0%
դ) Մուտքեր տույժերից, տուգանքներից		0	400	400		
զ) Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ		22908.2	21370.6		1537.6	93.3%
Ընդամենը	**227570.3**	**275434.4**	**254319.3**	**7315.5**	**28430.6**	**92.3%**

Տեղ համայնքի 2021թ. բյուջեի կատարման ամփոփ աղյուսակ ծախսերի գծով

/հազ.դրամ/

Հոդվածների անվանումը	Ծախսերի պլան	Ճշտված պլան	Փաստացի մաս	Շեղում գումարով		
				+	-	%
1.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	96390.9	121233.6	95581.5		25652.1	78.8%
2.Պաշտպանություն	1955.0	1475.0	1235.8		239.2	83.8%
3.Հասարակական կարգ	0.0	0.0	0.0			
4.Տնտեսական հարաբերություններ	19785.0	23349.2	21565.9		1783.3	92.4%
5. Շրջակա միջավայրի պաշտպանություն	14019.5	15721.1	15376.1		345.0	97.8%
6.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	30384.0	65057.0	48035.5		17021.5	73.8%
7.Առողջապահություն	0.0	0.0	0.0			
8.Հանգիստ, մշակույթ և կրոն	7710.0	6030.0	4047.9		1982.1	67.1%
9.Կրթություն	46594.9	65121.5	46127.4		18994.1	70.8%
10.Սոցիալական պաշտպանություն	5684.0	5448.0	1725.0		3723.0	31.7%
11.Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	36975.9	12076.3	0.0		12076.3	0.0%
Ընդամենը	**259499.2**	**315511.7**	**233695.1**	**0**	**81816.6**	**74.1%**

Բյուջետային միջոցների ազատ մնացորդը 31.12.2021թ. կազմել է 11 004.6 հազար դրամ ֆոնդային մասով և 49 696.7 հազար դրամ վարչական մասով:

Եկամուտներ

2021 թվականին համայնքի բյուջեով նախատեսված մի շարք եկամտատեսակների գծով հավաքագրումներ չեն կատարվել, որոնց վերաբերյալ ղեկավարության կողմից ներկայացվել են հետևյալ բացատրություններն ու դիտարկումները.

1) Այլ եկամուտներ (գույքի վարձակալությունից եկամուտներ)՝ /45.4%/ 4 251 600 << դրամ
2) Այլ եկամուտներ (համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայություն-ների մատուցումից)՝ /64.4%/ 1 247 300 << դրամ
3) Պաշտոնական դրամաշնորհներ (այլ դոտացիա) /20.7%/ 18 156 500 << դրամ

Նախատեսված եկամտատեսակները չեն հավաքագրվել հիմնականում սահմանային լարված ռազմական և արտակարգ դրություններով պայմանավորված:

Ծախսեր

2021 թվականին ըստ գործառնական դասակարգման ներքոհիշյալ ծրագրերով նախատեսված մի շարք ծախսեր չեն կատարվել, որոնց վերաբերյալ ղեկավարության կողմից ներկայացվել են հետևյալ բացատրություններն ու դիտարկումները.

1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ /78.8%/ 25 652 100 << դրամ

   Համայնքապետարանի հաստիքացուցակում առկա են եղել պաշտոններ, որոնք թափուր են մնացել, շուրջ 13 հաստիք, ինչի հետևանքով որոշակի ծախսեր չեն իրականացվել: Չեն իրականացվել նաև նախագծանախահաշվային և հետազոտական ծախսեր՝ կապված հրշեջ մեքենայի կայանատեղիի կառուցման և Ֆոտովոլտային արևային կայանի կառուցման հետ:

2) Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն՝ /73.8%/ 17 021 500 << դրամ

   Նախատեսվել է հիմնանորոգել Տեղի նախկին հիվանդանոցային մասնաշենքը, սակայն նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա անճշտությունների պատճառով, աշխատանքները նախատեսվում են իրականացնել 2022 թվականին:

3) Հանգիստ, մշակույթ և կրոն՝ /67.1%/ 1 982 100 << դրամ

   Սահմանային լարված իրավիճակով պայմանավորված մի շարք նախատեսված միջոցառումներ չեն իրականացվել:

4) Կրթություն՝ /70.8%/ 18 994 100 << դրամ

«Տեղի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գործունեությունը դադարեցվել է, ինչի պատճառով նախատեսված ծախսերը չեն իրականացվել:

5) Սոցիալական պաշտպանություն՝ /31.7%/ 7 323 000 ՀՀ դրամ

Համայնքի բնակիչների սոցիալական կարիքների բավարարման նպատակներով նախատեսվել են ծախսեր, սակայն դրանց հիմնական մասը կատարվել են բարեգործական, հասարակական և արտասահմանյան կազմակերպությունների միջոցներով: Արդյունքում նախատեսված ծախսերը չեն իրականացվել:

«ՓԵՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
տնօրեն՝ Ա. Բաբայան